ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑՈՒ ՃԹ ՍԱՂՄՈՍԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

ԺԳ-ԺԴ դդ. բանիմաց ու շնորհալի բաբունապետներից է Կիրակոս վարդապետ Երզնկացին († 1355), որի անտիպ երկերից է ՃԹ սաղմոսի[1] մեկնողական ճառը: Այն մեզ է հասել ձեռագիր մեկ ընդօրինակությամբ[2]: Եռամեծ վարդապետը մեկնում է սաղմոսի յուրաքանչյուր համար եւ երբեմն անդրադառնում առանձին բառերի կամ արտահայտությունների բացատրությանը: Սաղմոսի բովանդակությունից ելնելով՝ ճառն աչքի է ընկնում նաեւ վարդապետական խնդիրների արծարծմամբ, եւ մեր առաջ հառնում է ազգային-եկեղեցական մի գործիչ, որը քաջատեղյակ է Սուրբ Գրքի նրբություններին, Հայոց Եկեղեցու դավանանքին ու Սրբազան Ավանդությանը:

Կիրակոս Երզնկացին ճառի սկզբում շեշտում է, որ Ասված Իր փնօրենությունների եւ մարդկանց փրկության մասին բազում ձեւերով խոսեց մարգարեների, սուրբերի եւ հատկապես Դավիթ սաղմոսերգուի միջոցով: Ընդգծելով Սաղմոսաց գրքի կարեւորությունը՝ Կիրակոս բաբունին բազմաթիվ օրինակներով ցույց է տալիս, որ այդ մարգարեությունները իրականացան Նոր Կտակարանում: Ընդհանուր այս ներածականից հետո նա սկսում է քննարկել սաղմոսի անվանումը եւ թվի խորհրդաբանությունը: Նրա համար հստակ է, որ ՃԹ սաղմոսի հեղինակը Դավիթ սաղմոսերգուն է, չնայած նա գիտե նաեւ սաղմոսների այլ հեղինակների մասին. «Թէպէտ եւ զանազան վերագիր կա՝ «ՃԾ.», «Սաղմոս Դաւթի»: Սակայն ուր այսպէս կայ, այն անվերագիր է յԵբրայեցւոյն, ուր չեն լեալ պէտք ինչ քննութեան՝ թէ Դաւթի՞ է, թէ՞ ոչ: Զի է, որ ի Դաւթէ վերագրեցաւ, եւ է, որ յայլոցն: Որպէս որ ասի որդւոցն Կորխայ, Ասափայ, Իդիդոմայ կամ այլոյ ուրուք միոյ երգչացն, որք ուսանէին ի Դաւթայ, եւ ինքեանք եղանակս կարգէին, եւ ձայնս դնէին»: Այնուհետեւ Կիրակոսն անդրադառնում է սաղմոսի թվի բացատրությանը՝ զուգահեռներ անցկացնելով ավետարանական որոշ դրվագների հետ. «Իսկ թիւ սաղմոսիս խորհրդականք՝ Ճ. եւ Թ.: Ճ. թիւ կատարեալ, վասն զի ի Ժ.էն բաղկացեալ եղեւ, որպէս Ժ. ի միակէն գոյացաւ կրկնապատկելով, նոյնպէս Ճ. ի Ժ.էն: Զի Ժ., Ժ. է Ճ.ն՝ նշանակ Ղ. եւ Թ. ոչխարացն, հրշտակացն սրբոց, եւ մինն մարդկային բնութիւնս, որպէս Տէր առակաւ յԱւետարանին ետոյց»[3]: Սուրբգրային այս օրինակնե-

1 Սաղմոսաց գրքի մասին տե՛ս **П. Юнгеров**, Вероучение Псалтири, его особенности и значение в общей системе библейского вероучения. Казань, 1897, էջ 4-149, **Jerome F. D. Creach**, Yahweh as refuge at the Editing of the Hebrew Psalter, England, Sheffield Academic Press, 1996, էջ 11-126, Harper's Bible Dictionary, Bangalore, 2002, էջ 833-835, «Ներածություն Հին Կտակարանի, աշխատասիրությամբ Գրիգոր Դարբինյանի», Ս. Էջմիածին, 2000, էջ 179-201: ՃԹ սաղմոսն առանձնանում է Քրիստոսաբանական կարեւոր դրույթների շեշտադրությամբ եւ նշանակությամբ, որտեղ խոսվում է Մեսիայի, Նրա հավիտենական ծնունդյան, համբարձման, Տիրոջ աջում նստելու եւ Նրա մշտնջենավոր քահանայության մասին: Այս սաղմոսը մի քանի անգամ մեջբերվում է նաեւ Հիսուսի եւ առաքյալների կողմից. տե՛ս Մատթ. ԻԲ 43-45, Գործք Բ 34-35, Եբր. Է 17, 21:

2 Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (=ՄՄ), ձեռ. Ամ 4139 (1267 թ., թ. 372ա-378բ): Ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա Ջեյթունյան, Փ. Անթաբյան: Ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երեւան, 1965, էջ 1156:

3 Հմմտ. «Աղբիւր բացեալ՝ արարեալ Պետրոսի եպիսկոպոսի Բերթումեան Աղամալեանց», Ս. Էջմիածին, 1857, էջ 134:

ից հետո Կիրակոսն անդրադառնում է հրեշտակների ինը դասերին՝ նշելով, որ Քրիստոս համբարձվելիս ինն օր շարունակ եղավ հրեշտակների յուրաքանչյուր դասում, իսկ տասներորդ օրը նստեց Հոր աջ կողմում[4]: Այնուհետև Կիրակոս բարունին ձեռնամուխ է լինում բուն սաղմոսի քննությանն ու բացատրությանը՝ սկսելով հենց առաջին համարից. «Ասաց Տէր ցՏէր իմ. «Նի՛ստ ընդ աջմէ Իմմէ, մինչեւ եդից...»: Նախքան բուն համարի մեկնությունը, Կիրակոսը անդրադառնում է ՃԹ սաղմոսի սկսվածքի՝ հայոց այբուբենի առաջին տառի՝ Այբի խորհրդական մեկնությանը, որն իր գծապատկերով Ս. Երրորդության խորհուրդն է բացահայտում՝ հավելելով. «Ոստովքն յատկութեամբն զառանձնաւորութիւնն ցուցանէ, եւ խառնուածովքն զանբաժանին եւ զանքակ միաւորութիւն ասպուածութեանն»: Հայոց գրի նմանատիպ խորհրդաբանական բացատրություններն առկա են սրբախոսական, քերականագիտական, հայրաբանական եւ բառարանագրական երկերում[5], որտեղ շեշտվում է մեր այբուբենի ամեն մի տառի խորհուրդը նաեւ աստվածաբանական տեսանկյունից:

Անդրադառնալով Ս. Երրորդության առանձնավորական հատկություններին եւ նկատի ունենալով Այբի աստվածաբանական մեկնությունը՝ Կիրակոսը նշում է, որ Հայր Աստված անծին է, Որդին՝ ծնված «ի բնութենէ Հաւր», Սուրբ Հոգին էլ՝ բխած Հորից. «Նաեւ անունն իսկ խորհրդաւոր, զի Այրդ ստուգաբանեալ է աբ, որ է Հայր, որպէս թէ ասէ. «Հայր, որ ծնաւ զայլ տառսն»: Այսպէս Աստուած Հայր, որ ծնաւ զՈրդի եւ բխեաց զՀոգին, եւ արարչութեամբ եւ խնամաւք զարարածս»[6]: Կիրակոսը սրանով չի բավարարվում եւ շարունակում է երրորդաբանական իր մտածումները. «Քանզի ամենայն ինչ հասարակաց է Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, բայց յանձանց եւ յանուանցն, զի անդրադարձութիւն ոչ ունին անուանքն, եւ ոչ ի միմեանս լուծումն անուանցն եւ անձանցն: Այլ Հայր միշտ Հայր, եւ Որդի հանապազ Որդի, եւ Սուրբ Հոգին միշտ Հոգի Աստուծոյ՝ ելող ի Հաւրէ եւ երեւեալ յՈրդւոյ եւ յայլսն ամենայն զոյգ»[7]: Ինչպես տեսնում ենք, Կիրակոս Երզնկացին եւս մեկ անգամ փաստում է խնդրի վերաբերյալ Հայոց Եկեղեցու հստակ դիրքորոշումը, որը բյուրեղացել եւ պարզաբանվել է հայ վարդապետական մտքի անդաստանում:

Այսպես՝ Խոսրով Անձեւացու (Ժ դ.) ժամակարգության մեկնության տպագրում կարդում ենք. «Զի Որդի միշտ Որդի է եւ ոչ երբէք եղեալ Հայր, որպէս Հայր միշտ է Հայր, եւ ոչ երբէք Որդի լեալ:... Եւ թէպէտ մի են բնութեամբ Հայր եւ Որդի, սակայն անուամբ որիշ են եւ զանազան»[8]: Ավելի մանրամասնելով երրորդաբանական այս տեսությունը Սարգիս

4 Տե՛ս Կանոն երկրորդ Ծաղկազարդին, «Մատենագիրք Հայոց», Ը. հատոր, Շարական (=Շարական), Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 241, **Զաքարիա կաթողիկոս Չագեցի** (855-877), Ճառք, աշխատասիրությամբ Հ. Պօղոս վրդ.ի Անանեան (=Ճառք), Վենետիկ-Ս. Ղազար, 1995, էջ 403-404:

5 Խնդրի մասին հայ մատենագրության մեջ պահպանվել է «Դաւթի հայոց փիլիսոփայի, եւ Փիլիկեայ Հռոմոց վարդապետի, եւ Հոմորեայ արուեստատրի, եւ Մովսէսի Քերթողի խնդիր փափագման իմաստասիրականիս, իմաստութիւն քերթողական տառից ըստ այբուբենից» խորագրով բառարանը, որն ըստ վաստակաշատ հայագետ Լեւոն Խաչիկյանի՝ հեղինակել է Թովմա Մեծոփեցին. տե՛ս **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լեւոն Խաչիկյանի, Երեւան, 1999, էջ LVI-LVII, ՄՄ ձեռ. ՀՄ 7117, թ. 9ա:

6 Հմմտ. **Ներսէս Շնորհալի**, Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 335, նաեւ՝ **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 178:

7 Կիրակոս Երզնկացին այս խնդիրներին մանրամասն անդրադառնում է նաեւ Հովհաննեսի Ավետարանի Ա 1 համարի մեկնությանը նվիրված ճառի մեջ. տե՛ս ՄՄ ձեռ. ՀՄ 1098, թ. 116ա-117բ:

8 «Մեկնութիւն ժամակարգութեան՝ արարեալ երանելւոյն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի, եւ կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի», յՕրթագիւղ, 1840, էջ 104: Այս հատվածը հավանաբար հետագայում ավելացրել է Մովսես վրդ. Երզնկացին († 1325), որովհետեւ այն բացակայում է Խոսրովի մեկնության

Շնորհալին (ԺԲ դ.) Կաթողիկե թղթերի մեկնության մեջ գրում է. «Այլ ամենայն որ ինչ Հօրն է՝ Որդւոյ է, բաց ի հայրութենէն, եւ որ ինչ Որդւոյ է՝ Հոգւոյն է, բաց յորդիութենէն, եւ որ ինչ Հոգւոյն է՝ Հօր է եւ Որդւոյ, բաց ի Հոգւոյն անձնաւորութենէն, եւ որ ինչ Որդւոյ է եւ Հոգւոյն՝ Հօր է: Բայց Հայր ոչ է ի պատճառէ իմեքէ, որպէս Որդի եւ Հոգի, այլ Ինքն է պատճառ Որդւոյ եւ Հոգւոյ՝ միոյն՝ ծննդեամբ, եւ միւսոյն՝ ելողութեամբ»[9]: Այսպես է ասփվածաբանում նաեւ Եղիշե վարդապետը Ե դարում. «Քանզի Աստուած հոգի է, եւ հոգի Աստուած. հոգի՝ Որդի, հոգի եւ Սուրբ Հոգին: Եւ արդ, զի այս այսպէս է, ոչ եթէ Հայր՝ Որդի, եւ ոչ Որդին՝ Հայր, եւ ոչ Սուրբ Հոգին՝ Հայր եւ Որդի»[10]:

Կիրակոս Երզնկացին այս սաղմոսի մյուս մեկնիչների նման առաջին փողերի մեկնաբանության ժամանակ շեշտում է Հոր եւ Որդու համապատիվ, փառակից եւ հավասար լինելը, որով ընդդիմանում է արիոսականներին[11]: Նույն կերպ է մեկնաբանում նաեւ Բարսեղ Մաշկ եւորցին (ԺԳ դ.) Մարկոսի Ավետարանի մեկնության մեջ. «Ցաջմէ Աստուծոյ կոչէ զհաւասար աթոռսն եւ զմի թագաւորութիւնն եւ զփառսն, զոր ունէր ընդ Հօր, քանզի մի իսկ են փառք եւ պատիւ եւ թագաւորութիւն Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն»[12]:

«Ցարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զՔեզ» հատվածը մեկնելիս Կիրակոսը հստակորեն զանազանում է Քրիստոսի հավիտենական եւ ժամանակի մեջ ծնունդները. «Իսկ «յառաջ քան զարուսեակն» որ ասէ, յայտնէ յառաջ քան զժամանակս եւ զյաւիտեանս զՆա ծնեալ...: Որպէս եւ յորովայնէ ծնանին մարդիկ, եւ ծնեալքն զնոյն բնութիւն ունին զծնողացն, այսպէս յԻնէն ծնայ, ասէ, եւ զծնողիս ի քեզ բերես միութիւն Իսկ ասելն, թէ՝ «ծնայ զՔեզ», յետ անճառ ծննդեանն, որ ի Հաւրէ, եւ զերկրորդս է իմանալ»[13]:

Օգտվելով Սուրբ Գրքից եւ հայրախոսական աղբյուրներից նա անդրադառնում է նաեւ Մելքիսեդեկ-Քրիստոս նմանություններին: Մելքիսեդեկն Աբրահամին մատուցեց բաղարջ հաց եւ գինի, որը Ս. Պատարագի նախօրինակն է: Նույն ձեւով Քրիստոս հաստատեց Ս. Հաղորդության խորհուրդը Վերջին ընթրիքի ժամանակ[14]: Քրիստոսի քահանայությունը ոչ թե ժամանակավոր էր, այլ հավիտենական՝ ըստ Մելքիսեդեկի կարգի: Ուշագրավ է հատկապես Մելքիսեդեկ-Սեմ նույնացումը, որի հիմքը հրեական հին ավանդությունն է[15]: Խնդրին անդրադարձել է նաեւ Ս. Գրիգոր Տաթեւացին հանրագիտարանային «Գիրք հարցմանց» աշխատության մեջ[16]: Մելքիսեդեկի մասին գրելիս Կիրակոսն օգտվել է Ս.

հին ձեռագրերում. տե՛ս «Մատենագիրք հայոց», Ժ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 120:

9 «Մեկնութիւն եօթանց թղթոց Կաթուղիկեայց՝ արարեալ երանելւոյն Սարգսի շնորհալւոյ վարդապետի՝ հայոց իմաստասիրի եւ քաջ հռետորի», Կոստանդինուպօլիս, 1828, էջ 47, նաեւ էջ 186:

10 «Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք», Վենետիկ, 1859, էջ 308:

11 Հմմտ. "Творения святого отца нашего Иоанна Златауста", т. 5, С-Петербург, 1899, էջ 284:

12 «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի՝ արարեալ երանելւոյն Բարսղի շնորհալի Վարդապետի Ճոն կոչեցելոյ՝ ըստ մակադրական անուանն լուսատր մտրօք եւ իմաստալի յորդորակօք», հատոր երկրորդ, Կոստանդինուպօլիս, 1826, էջ 453:

13 Հմմտ. «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի՝ յօրինեալ սքանչելի Աստուածաբանութեամբ Սուրբ եւ Երջանիկ Տեառն՝ Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ», 1797, յԱժդարխան (=**Վարդան**), էջ 373, **Անանիա Նարեկացի**, Հաւատարմատ. «Մատենագիրք հայոց», Ժ. հատոր, Ժ. դար, էջ 486:

14 Կիրակոս Երզնկացին բաղարջ հացի եւ անապակ բաժակի խնդրին անդրադարձել է նաեւ իր դավանաբանական թղթում. տե՛ս «Կիրակոսի վարդապետի Երզնկացւոյ թուղթ առ Կարնեցիս». «Գանձասար», հ. Զ, Երեւան, 1996, էջ 566-568:

15 "Encyclopaedia Judaica, Second edition", v. 14, Macmillan Reference USA, 2007, էջ 11:

16 Տե՛ս «Գիրք հարցմանց», էջ 300:

Աթանաս Ալեքսանդրացու (295-373) մի գրվածքիձեւ բառացի մեջբերում է կատարել իր ճառում[17]:

«Նի՛սր ընդ աջմէ Իմմէ» հատվածի մեկնության ժամանակ Կիրակոս բաբունին խորհրդածում է աջ-ձախ հակոտնյաների մասին եւ սուրբգրային մի քանի օրինակներ բերում: Դեռեւս միջնադարում կենցաղավարած ըմբռնման համաձայն՝ աջը խորհրդանշում է բարին, դրախտը, ձախը՝ չարը, դժոխքը եւ այլն[18]: Ըստ Կիրակոսի՝ Ասված այսպես է արտահայտվում՝ մեզ հասկանալի լինելու համար: Նույն ձեւով իմաստունները Ս. Երրորդության անձերի մասին ասում են. «ԶՈրդի ընդ աջմէ Հաւր, եւ զՀոգի ընդ աջմէ Որդւոյ»[19]:

Այնուհետեւ Կիրակոս Երզնկացին անդրադառնում է ՃԹ 2 համարում Դավիթ մարգարեի կիրառած «զավազան» բառին: Վերջինս իշխանության եւ պատվի նշանակ է թագավորների, վարդապետների, առաջնորդների եւ հենվելու միջոց տկարների համար: Բայց Տիրոջ զավազանը Գողգոթայում կանգնեցված խաչն է[20]: Եթե չարի եւ բարու գիտության ծառի ճաշակմամբ առաջին Ադամը մեռավ, ապա կենաց ծառը՝ խաչը, պտղաբերեց երկրորդ Ադամին՝ Քրիստոսին, եւ մարդկությունը փրկագործվեց: Ուստի Նրան ճաշակողը հավիտյան մահ չի տեսնի. «Իսկ Տեառն մերոյ զաւազան իմանալ է զխաչն, որ կանգնեցաւ ի Գողգոթա՝ ի վերայ գերեզմանին Ադամայ փոխանակ մահաբեր ծառոյն, զոր կերեալ Ադամայ մեռաւ, սա կանգնեցաւ կենաց ծառ եւ երեր պտուղ զՔրիստոս»[21]: Ներսես Լամբրոնացին (1153-1198) սաղմոսների մեկնությանը նվիրված արժեքավոր աշխատության մեջ «զավազանի» փոխարեն օգտագործում է «ցուպ»-ը եւ հավելում. «Ցուպ զօրութեան Քրիստոսի այժմ իմանամք զարդարութիւնն Իւր բնական կրիւք եւ չարչարանս խաչին, զոր կրեաց ի Սիօն»[22]:

Բացի վարդապետական խնդիրների արծարծումից Կիրակոս Երզնկացին ճառում անդրադառնում է նաեւ «մինչեւ» եւ «երդնուլ» բառերի կիրառությանը Ս. Գրքում[23], տալիս «Սիոն»-ի ստուգաբանությունը[24]:

---

17 Տե՛ս «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ Հայրապետի Ճառք, թուղթք եւ ընդդիմասլացութիւնք» (=**Աթանաս**), Վենետիկ, 1899, էջ 486-487:

18 Խնդրի մասին տե՛ս **Նակոր Քյոսեյան,** Դրվագներ հայ միջնադարյան արվեստի ստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 94-96:

19 Տե՛ս Ճառք, էջ 405, **Վարդան**, էջ 374:

20 Հմմտ. «Մեկնութիւն Սաղմոսաց՝ յօրինեալ ի Հ. Միքայէլ վարդապետէ Չամչեանց՝ յաշակերտութենէ ամենապատիւ Մխիթարայ Աբբայիօր» (=**Չամչեանց**), հ. Ը, Վենետիկ, 1820, էջ 116: Ս. Աթանաս Ալեքսանդրացին Սաղմոսների մեկնության մեջ «զավազանը» մեկնում է իբրեւ ավետարանական խոսք, որ իշխեց բոլոր թշնամիների վրա. տե՛ս **Афанасий Великий**, Творения в четырех томах, ч. 4, Свято-Троицкая Сергиева Лавра, 1903, էջ 351:

21 Կիրակոս Երզնկացին հավանաբար աչքի առաջ է ունեցել շարականի հետեւյալ տողերը. «Փայտ կենաց, որ փոխանակ մահացու պտղոյն զՔրիստոս պտղաբերեցեր». տե՛ս Կանոն Վերացման Սրբոյ Խաչին, Շարական, էջ 313:

22 ՄՄ ձեռ. Հմ 2613, թ. 500, հմմտ. **Չամչեանց**, էջ 115-116: Անկասկած, Կիրակոս Երզնկացին ծանոթ է Լամբրոնացու այս մեկնությանը, որից բառացի մի ամբողջական հատված է մեջբերել ԻԸ 3 սաղմոսի իր մեկնության մեջ. տե՛ս ՄՄ ձեռ. Հմ **2187**, թ. 106բ–107ա, հմմտ. անդ, թ. 161ա-161բ:

23 Տե՛ս **Չամչեանց**, էջ 111-112:

24 Վարդան Արեւելցին իր ճառերից մեկում նույնպես անդրադառնում է Սիոն անվան կիրառությանը Սուրբ Գրքում: Եթե Ասվածաշնչի Յոթանասնից թարգմանության մեջ բառիս իմաստային համարժեքն է «Դիպանոց»-ը, ապա այլ թարգմանություններում՝ «Պատուար» եւ «Տեղի սգոյ»: Վարդան վարդապետն անվան այս իմաստները նույնացնում է Սուրբ եւ Կաթողիկե Տիեզերական Եկեղեցու խորհրդի հետ. **Վարդան Արեւելցի**, Ճառք, Ներբողեանք, աշխատասիրությամբ Նակոր Քյոսեյանի, Երեւան, 2000, էջ 104:

Քրիստոնյայի ճշմարիտ կերպարն է բացահայտում ճառագիրը «Եւ տիրեսցես Դու ի մէջ թշնամեաց Քոց» հատվածը մեկնելիս: Դավիթ մարգարեն չասաց «ի վերայ թշնամեաց», որը գոռոզներին եւ բռնակալներին է հատուկ, այլ «ի մէջ թշնամեաց», որը պատշաճ է Քրիստոսին եւ Նրա աշակերտներին: Վերջիններս հալածվեցին, նեղություններ կրեցին, բայց զորացան եւ հաղթանակած դուրս եկան հոգեւոր պատերազմից՝ շատերին դարձի բերելով: Այսպիսին պիտի լինի Քրիստոսի ամեն մի հետեւորդ:

ՃԹ- սաղմոսին նվիրված այս մեկնողական ճառը նույնպես անիտս վկայությունն է Կիրակոս բաբունապետի հոգեմտավոր պատրաստվածության եւ լայն մտահորիզոնի, որի նպատակն է եղել իր աշակերտներին եւ բանավոր հոտին ուսուցանել Ս. Գիրք, եւ նրանց միտքն ու հոգին կրթել ուղղափառ հավատքի դավանությամբ:

Բնագրի պատրաստության ժամանակ վերականգնել ենք բառավերջերի եւ բառամիջում չգրված յ-երը: Տերունական անունները եւ նրանց փոխարինող դերանունները ներկայացրել ենք մեծատառով՝ առավել հստակ եւ ճշգրիտ դարձնելու համար նախադասությունների իմաստները: Անհրաժեշտության դեպքում մեր կատարած հավելումներն առնված են անկյունավոր փակագծերի մեջ՝ []:

Այսպիսով, բնագիրը հրատարակում ենք ըստ ՄՄ Ն^{մր} 4139, թ. 372ա-378բ, 1267 թ., գրիչ՝ Ասիլ, Մխիթար, 424 թերթ, թուղթ 16,5x12,3. միասիւն, բոլորգիր, 22 տող[25]:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ

25 Շնորհակալություն ենք հայտնում Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գեւորգ Տեր-Վարդանյանին՝ ճառի ձեռագրի թվային տարբերակը ձեռք բերելու, աջակցության եւ օգտակար խորհուրդների համար:

ԿԻՐԱԿՈՍ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՐԱՐԵԱԼ Ի ՍԱՂՄՈՍՆ ՃԹ., ՈՐ ԱՍԷ. «ԵԻ ԱՍԱՑ ՏԷՐ ՑՏԷՐ ԻՄ. «ՆԻՍՏ ԸՆԴ ԱՋՄԷ ԻՄՄԷ, ՄԻՆՁԵԻ ԵԴԻՑ» (ՍԱՂՄ. ՃԹ 1)

Կանուխ եւ ամէնիմաստ գիտութեամբ Իւրով Աստուած, զոր ինչ յետ ժամանակաց կատարելոց էր, յառաջագոյն ազդեալ դուշակէր մարգարէիւքն: Զի յորժամ լցցի ի ժամանակի իւրում, մի՛ անհաւատալի,- եւ նոր, եւ անընդել երեւեցի: Վասն այսորիկ եւ յաղագս տնաւրէնութեան Իւրոյ եւ մարդկան փրկութեան բազմամասնաբար եւ բազմաւրինակ կերպիւք ցուցանէր սրբոց, եւ նոքաւք տայր աւետիս տիեզերաց՝ ապասել եւ ակն ունել հանուրց փրկութեան եւ առաւել եւս ի ձեռն մարգարէին Դաւթի՝ զնա գործիք Իւր արարեալ եւ նովաւ խաւսի զմեծամեծս: Որպէս եւ ինքն իսկ ասէր. «*Լեզու իմ գրիչ է երագագիր գպրին, որ տեսլեամբ իւրով գեղեցիկ է, քան զամենայն որդիս*» (Սաղմ. ԽԴ 2): Սա վասն ամենայնի, զոր կատարեաց Որդին Աստուծոյ, ուսուցանել մեզ կարգաւ՝ սկսեալ յանճառ ծննդենէն, որ ի Հաւրէ, եւ զոր մարմնովն կատարեաց, մինչ ի մեւսանդամ Նորայն յայտնութիւն, զոր սուղ ինչ բանիւ համառաւտ ցուցցուք՝ նեւթ բանի տալով եղբարց մերոց՝ որդւոց Նոր Սիոնի: Որպէս ասէ յաղագս Որդւոյն Աստուծոյ՝ ցուցանելով, թէ ի բնութենէ Հաւր է եւ յէութենէ, ի դիմաց Որդւոյ ասէ. «*Տէր ասաց ցիս. «Որդի իմ ես Դու*» (Սաղմ. Բ 7): Եւ զի չէ ժամանակաւ, ասէ. «*Ցարգանդէ /372ա/ յառաջ քան զարուսեակ*[1] *ծնայ զՔեզ*» (Սաղմ. ՃԹ 3): Եւ թէ արարիչ է եղելոցս. «*Բանիւ Տեառն երկինք հաստատեցան*» (Սաղմ. ԼԲ 6): Իսկ վասն կուսական ծննդեանն եւ որ յետ ժամանակաց. «*Ես այսաւր ծնայ զՔեզ*» (Սաղմ. Բ 7): Եւ զամբոխիլն Հերոդի եւ հրէից ասէ ի Նորա ծննդեանն. «*Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, եւ ժողովուրդք խորհեցան ի [սնոտիս]*» (Սաղմ. Բ 1): Եւ զերկրպագութիւն մոգուցն եւ զընծայաբերութիւն. «*Երկիրպագցեն Նմա ամենայն թագաւոր[ք] երկրի, եւ թագաւորք Արաբայ եւ Սաբայ պատարագս բերցեն Նմա*» (Սաղմ. ՀԱ 10-11): Եւ զի խոնարհութեամբ եկ. «*Իջցէ որպէս [զ]անձր եւ ի վերայ գեղման*» (Սաղմ. ՀԱ 6): Եւ թէ զի՞նչ գործեսցէ. «*Ծագեսցի յաւուրս Նորա արդարութիւն բազում եւ խաղաղութիւն*» (Սաղմ. ՀԱ 7): Եւ վասն քառասնեւրորդ գլխոտեանն Նորա ի տաճարն. «*Տէր ի տաճար սուրբ Իւրում*» (Սաղմ. Ժ 5): Եւ զի անմեկնելի է ի Հաւրէ, որ ի ծոց Կուսին, ասէ. «*Տէր յերկինս յաթոռ Իւրում*» (Սաղմ. Ժ 5): Եւ թէ վասն ի՞նչ պատճառի փախեաւ յեգիպտոս, որ «*Հնդիկք, ասէ, յառաջ ձեռնտու լիցին առ Աստուած*» (Սաղմ. ԿԷ 32): Եւ վասն մկրտութեան Տեառն ի Յորդանան եւ Հաւր վկայելոյն «*Ձայն Տեառն ի վերայ ջրոց*» ասէ: Եւ զի Աստուած երեւեալ, Հոգին աղաւնակերպ եւ որ Մկրտիրն «ի վերայ ջրոց բազմաց» (Սաղմ. ԻԸ 3), եթէ՝ «*Թեւք աղաւնոյ արծաթապատ են, եւ թիկնամէջ նորա ի գոյն ոսկւոյ*» (Սաղմ. ԿԷ 14): Եւ վասն յանապատն հանելոյն զնա Հոգւոյն ասէ. «*Հոգի Քո բարի առաջնորդեսցէ*» (Սաղմ. ՃԽԲ 10): Եւ վասն յաղթելոյն զսատանայ ասէ. «*Ի վերայ իժի թագաւորականի գնասցես Դու*» (Սաղմ. Ղ 13): Եւ վասն կոչման առաքելոցն, եւ թէ յի՛նչ փառս կոչեաց ասէ. «*Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր*» (Սաղմ. ԽԴ 17), եւ «*Ի գումարել երկնաւորին զթագաւորս ի վերայ նոցա*» (Սաղմ. ԿԷ 15), եւ թէ՝ «*Ընդ ամենայն եր-*

1 Բնագրում ամենուր՝ պարաւսեակ։

կիր եվ բարբառք նոցա» (Սաղմ. ԺԸ 5): Եւ վասն գալոյն Տեառն ի փրկագործ չարչարանսն եւ յարուցանելոյն զՂազար յաւրինակ բնութեանս ասէ. *«Տէ՛ր, հանե՛ր ի դժոխոց զանձն իմ»* (Սաղմ. ԻԹ 4), եւ *«Օրհնեալ ես, որ գաս յանուն Տեառն»* (Մարկ. ԺԱ 10): Եւ թէ՝ *«Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ»* (Սաղմ. ՃԺԷ 27), եւ *«Ի բերանոյ*[2] *մանկանց տղայոց հաստատեցեր զաւրհնութինս»* (Սաղմ. Ը 3): Եւ վասն չար նախանձու հրէիցն ասէ. *«Թշնամիք իմ ասացին Ինձ չար. «Ե՞րբ իցէ, զի մեռցի եւ կորիցէ անուն Նորա»* (Սաղմ. Ի 6): Եւ վասն բաշխելոյ զմարմին եւ զարիւնն ի փրկութիւն մեզ ասէ. |372բ| *«Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան, ակն [յանդիման նեղչաց իմոց]»* (Սաղմ. ԻԲ 5): Եւ զի անխառն է ի ջրոյ բաժակ Սուրբ Խորհրդին ասէ. *«Բաժակ Քո որպէս անապակ արբեցոյց զիս»* (Սաղմ. ԻԲ 5): Եւ յորդորէ եւ ասէ. *«Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք, զի քաղցր է Տէր»* (Սաղմ. ԼԳ 9): Եւ վասն Յուդայի մատնութեանն ասէ. *«Որ ուտէր ընդ Իս հաց, արար Ինձ խաբէութիւն»* (Յովհ. ԺԳ 18), եւ *«Խաւսեցան զինէն լեզուաւք նենգաւորաւք»* (Սաղմ. ՃԸ 2): Եւ վասն կատաղութեան հրէիցն եւ հայհոյելոյն առաջի Պիղատոսի ասէ. *«Եդին յերկինս զբերանս իւրեանց, եւ զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ»* (Սաղմ. ՀԲ 9), եւ *«Շուրջ եղեն զին եւ շունք բազումք»* (Սաղմ. ԻԱ 17): Եւ ի խաչին ը եւեւելոյն ասէր. *«Ծակեցին զձեռս իմ եւ զոտս իմ»* (Սաղմ. ՀԱ 18), եւ *«Ետուն Ինձ կերակուր լեղի եւ ի ծարաւ իմ արբուցին Ինձ քացախ»* (Սաղմ. ԿԸ 22), եւ *«Բաժանեցին զհանդերձս իմ ի մէջ իւրեանց»* (Սաղմ. ԻԱ 19): Եւ վասն կամաւոր մահուանն ասէ. *«Ի ձեռս Քո աւանդեմ զհոգի իմ»* (Մատթ. ԻԳ 46): Եւ վասն աւերման գժոխոցն ասէ. *«Զքաղաքսն աւարեցեր, եւ կորեաւ յիշատակ նոցա աղաղակաւ»* (Սաղմ. Թ 7): Եւ վասն կապելոյն զսատանայ ասէ. *«Թշնամւոյն զէն պակասեաց մինչ ի սպառ»* (Սաղմ. Թ 7): Եւ վասն ազատութեան, որ անդն հոգւոցն. *«Փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ի*[3] *ներքնոց»* (Սաղմ. ՁԵ 13): Եւ վասն թողլոյ զնա աշակերտացն եւ փախստեանն. *«Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ հեռի եղեն յինէն»* (Սաղմ. ԼԷ 12): Եւ վասն թաղմանն եւ դնելոյն ի դերեզմանին. *«Եդին զիս ի գբի ներքնում»* (Սաղմ. ՁԷ 7), եւ *«Ոչ թողցես զու զանձն իմ ի դժոխս»* (Սաղմ. ԺԵ 10): Եւ վասն փառաւոր գալստեանն Նորա ասէ. *«Յարեաւ Աստուած եւ ցրուեցան ամենայն թշնամիք Նորա»* (Սաղմ. ԿԷ 2): Եւ համբառնալոյն առ Հայր ասէ. *«Համբարձաւ Աստուած աւրհնութեամբ, եւ Տէր մեր ձայնիւ փողով»* (Սաղմ. ԽԶ 6): Վասն զարմանալոյն վերնոցն ի տեսանելն զնա արեամբ զանկեալս ասէ. *«Համբարձէ՛ք իշխանք զդրունս ի վեր»:* Եւ յասելն, թէ՝ *«Ո՞վ է սա»*, տայ պատասխանի. *«Տէր զաւրութեանց. Սա Ինքն է թագաւոր փառաց»* (Սաղմ. ԻԳ 9-10): Եւ վասն իջման Ամենասուրբ Հոգւոյն ասէ. *«Հոգի Քո բարի առաջնորդեսցէ»* (Սաղմ. ՃԽԲ 10), եւ թէ՝ *«Հոգւով բերանոյ Նորա ամենայն զաւրութիւնք նոցա հաստատեցան»* (Սաղմ. ԼԲ 6): Եւ յորժամ վերացաւ ուր չոգաւ. |373ա| *«Ասաց Տէր ցՏէր իմ. «Նի՛ստ ընդ աջմէ Իմմէ»* (Սաղմ. ՃԹ 1): Եւ վասն փառաւոր եւ երկրորդ գալստեանն Նորա ասէ. *«Աստուած մեր յայտնապէս եկեսցէ, եւ հուր առաջի Նորա գնասցէ»* (Սաղմ. ԽԹ 3): Եւ թէ զի՞նչ առնէ սիրելեաց Իւրոց. *«Արդարքն ուրախ եղիցին եւ ցնծասցեն առաջի Նորա»* (Սաղմ. ԿԷ 4): Եւ թշնամեաց Նորա ասէ. *«Հուր այրեսցէ զթշնամիս Նորա»* (Սաղմ. ՂԶ 3): Եւ ոչ եթէ զայս յատուկ վարդապետս մեզ եւ ուսուցանէ Հոգին Սուրբ նովաւ, այլ եւ վասն երկնի եւ երկրի եւ ծովու եւ որ ի սոսա գոյացութիւնք

2 Բնագրում՝ ի բերանոց։
3 Բնագրում այսպես է։

աշխարհին խելամուտ առնէ զմեզ, եւ տայ գեղեցիկ խրատք քաղաքավարութեան մարդկան: Այլ զի առաջիկայ սաղմոսիս միտք վասն վերացման Փրկչին Տեառն մերոյ յերկինս է յետ քառասնաւրեայ աւուր յարութեան նորա, եւ զմարմինն, զոր ի մէնջ էառ անբաժանելի աստուածութեամբն, ընդ աջմէ Հաւր նստուցանելովն: Վասն այնորիկ զտնաւրինականն միայն յիշեցաք:

Ժամ է այսուհետեւ դալ ի տեսութիւն վերագրին եւ թիւ սաղմոսիս: Զի է վերագիրն այսպէս՝ «Սաղմոս ի Դաւիթ»: Թէպէտ եւ զանազան վերագիր կա՝ «ՃԾ.», «Սաղմոս Դաւթի»: Սակայն ուր այսպէս կայ, այն անվերագիր է յերբայեցւոյն, ուր չեն լեալ պէտք ինչ քննութեան՝ թէ Դաւթի՞ է, թէ՞ ոչ: Զի է, որ ի Դաւթէ վերագրեցաւ, եւ է, որ յայլոցն: Որպէս որ ասի որդւոցն Կորխայ, Ասափայ, Իդիդոմայ կամ այլոյ ուրուք միոյ երգչացն, որք ուսանէին ի Դաւթայ, եւ ինքեանք եղանակս կարդէին, եւ ձայնս դնէին: Բայց վերագիրն համառաւտ զառաջիկայ գրոցն զաւրութիւն պարփակեալ ունի: Զի որպէս կենդանին ի դիմաց ճանաչի, նոյնպէս գիրք ի վերագրէն: Իսկ «սաղմոսն» թարգմանի «երգ», քանզի երգով ասիւր սաղմոսք ամենայն: Վասն զի հոգով եւ մարմնով պարտ է պաշտաւնէին Աստուծոյ աշխատել, զի ամենեքումբք պսակեսցի: Իսկ թիւ սաղմոսիս խորհրդականք՝ Ճ. եւ Թ.: Ճ. թիւ կատարեալ, վասն զի ի Ժ.էն բազկացեալ եղեւ, որպէս Ժ. ի միակէն գոյացաւ կրկնապատկելով, նոյնպէս Ճ. ի Ժ.էն: Զի Ժ., Ժ. է Ճ.ն՝ նշանակ Ղ. եւ Թ. ոչխարացն, հրշտակացն սրբոց, եւ մինն |373բ| մարդկային բնութիւնս, որպէս Տէր առակաւ յԱւետարանին ասէր: Թողլով զՂ. եւ Թ. յանապատին՝ Յիսուս եկն ի խնդիր միոյ մոլորեալ ոչխարիս, որ են մարդիկք (տե՛ս Մատթ. ԺԸ 12-13): Եւ գտեալ, ուսաւք բարձեալ՝ տարեալ դասեաց, ընդ որս կացինն եւ մնացին: Եւ կամ Ժ. դրամքն, յորոց զմինն կորոյս կինն, եւ լուցեալ ճրագ՝ աւել ած տանն, մինչեւ եգիտ: Եւ ուրախ է ընդ գիւտն բարեկամաւքն, որ առակեալ են յինն դասս Հրշտակաց (տե՛ս Ղ.ուկ. ԺԵ 8-9): Յորս տանն իմաստունք՝ Կացեալ Տեառն մերոյ յետ վերացմանն Իւրոյ Յիսուս աւր մի ի մին դասն՝ ներքուստ ի վեր սկսեալ ի Հրշտակացն՝ ուրախացուցեալ զնոսա տեսլեամբ հրճուութեան Իւրոյ: Զոր անմարմնաբար ոչ կարէին տեսանել, մարմնովն տեսին եւ ցնծացան: Եւ ապա անց ի Հրշտակացն, եւ յետ այնորիկ՝ ի Պետացն, եւ ապա՝ յիշխանութեանց, եւ յետ այնորիկ՝ ի Զաւրութիւնսն, եւ ապա՝ յԱթոռսն: Եւ ի Ժ.երորդ աւուրն նստեալ ընդ աջմէ Հաւր, առաքեաց զԱմենասուրբ Հոգին ի դասս առաքելոցն (տե՛ս Գործք Բ 1-4), որպէս ուսուցանէ մեզ մարգարէս՝ յետ կատարելոյ զամենայն տնտաւրինականն եւ պսակելոյ զմարմինն յաղթութեամբք:

«Ասաց, ասէ, Տէր ցՏէր իմ. «Նի՛ստ ընդ աջմէ Իմմէ, մինչեւ եդից» (ՃԹ 1): Ամենաբարւոք է եւ տառս սկզբնաւորս: Զի եւ սա է առաջին յայրբենսն մեր. եւ ոչ թէ մերս միայն, այլ եւ ամենայն ազգաց, որք ունին նշանագիր, որ է նշանակ երեք ոստովքն Սրբոյ Երրորդութեանն: Ոստովքն յատկութեամբն զառանձնաւորութիւնն ցուցանէ, եւ խառնուածովքն զանբաժանին եւ զանքակ միաւորութիւն աստուածութեանն: Որպէս եւ սերոբէքն ասէին երեք սուրբ եւ մի Տէր զաւրութեանց անուանէին (տե՛ս Ես. Զ 3): Քանզի ամենայն ինչ հասարակաց է Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, բայց յանձանց եւ յանուանցն, զի անդրադարձութիւն ոչ ունին անուանքն, եւ ոչ ի միմեանս լուծումն անուանցն եւ անձանցն: Այլ Հայր միշտ Հայր, եւ Որդի հանապազ Որդի, եւ Սուրբ Հոգին միշտ Հոգի Աստուծոյ՝ ելով |374ա| ի Հաւրէ եւ երեւեալ յՈրդւոյ եւ յայլսն ամենայն զոյգ: Նմանա-

պէս եւ յառնելն զարարածս: Դաւիթ ասէ. *«Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, բանիւ Տեառն երկինք հաստատեցան, եւ ի Հոգւոյ բերանոյ Նորա ամենայն զաւրութիւնքն»* (Սաղմ. ԼԲ 5-6): Վասն որոյ եւ ստորն կից է, զի հաւասար են յարարածոցս կազմութիւն եւ վերին կողմն բացատ, թէ վայրաւք ոչ փակի, այլ յամէնիսեան, եւ ամենեքեան ի նա: Եւ թէ ոք ստուգութեամբ միտ դնէ, գտանէ յԱյր եւ անտի զամենայն գիրսն գոյացեալ, եւ ամենայնքն երեւին ի նմա, եւ նա յամենայնսն սակաւ ինչ շեղութեամբ զատեալ: Նա եւ անունն իսկ խորհրդաւոր, զի Այրդ ստուգաբանեալ է *աբ*, որ է Հայր, որպէս թէ ասէ. «Հայր, որ ծնաւ զայլ տատն»: Այսպէս Աստուած Հայր, որ ծնաւ զՈրդի եւ բխեաց զՀոգին, եւ արարչութեամբ եւ խնամաւք զարարածս: Նա եւ ի թուական արուեստն ի մինն եւ ի միակն. սա է, որ բազմապատկելով ծնանի զամենայն թիւսն: Եւ ի ճայնաւորութիւնսն սա է առաջին ի յեւթանէսինսն, առանց որոց անհնարին է ումեք բանալ զբերան, կամ խաւսս կատարել առանց սոցա: Եւ սա է, որ երբեմն կակղանայ, եւ երբեմն կարծրանայ եւ անտեղիտալի լինի: Այսպէս եւ Աստուած. յորժամ ասեմք զՆա սէր, եւ բարի, եւ ողորմած, եւ գթած, եւ արդար, եւ այլ այսպիսիք, ամէնն է: Իսկ յորժամ քննեմք եթէ զի՞նչ է յէիցս եւ ոչ ինչ, կարծրացաւ եւ անտեղիտաջեղեւ: Բազում եւ այլ գովութիւնս ունի այս գիր, զոր այլում ժամու թողլի է:

«Ասաց Տէր ցՏէր իմ. «Նի՛ստ ընդ աջմէ»: Մարդկաւրէն խաւսս ձեւացուցանէ մարգարէս Աստուծոյ, զի մեք իմանալ կարացուք մեր սովորութեամբքս: Զի մարդիք, յորժամ կամին յորդւոց եւ ի սիրելեաց ի պատիւ հանել, ընդ աջմէ նստուցանեն: Եւ այն յետ ժամանակաց եւ աւուրց, իսկ այն ո՛չ այսպէս: Զի յորմէ հետէ Հայր է, ընդ Նմին եւ Որդի, զի առանց Որդւոյ երբէք ոչ էր Հայր՝ եւ ոչ քթթել մի ական, այլ ամենայնիւ զոյգ ընդ նմա՝ Աստուած եւ թագաւոր եւ ընդ աջմէ Նորա: Այլ զի վասն մարմնաւորութեան Որդւոյ եւ բանս, զ|374բ|որ հրեայքն ասէին հակառակ Աստուծոյ եւ վասն այնորիկ սպանին: Զհաճելն Աստուծոյ Հաւր ընդ մարմին առնուլն Որդւոյ ցուցանէ մարգարէս՝ ի կշտամբումս հրէիցն եւ յուրախութիւն հաւատացելոցն, թէ յայսպիսի պատիւ եհան զմարմինս Աստուած, զի աստուածացաւ եւ ընդ աջմէ Հաւր նստաւ (տե՛ս Մարկ. ԺԶ 19): Եւ ի կշտամբումն Արիոսի աղանդոյն, որ ասէր՝ զՈրդի ոչ գոլ հաւասար Հաւր եւ փառակից, եցոյց թէ համապատիւ է: Որպէս եւ Տէր երբեմն ասէր վարդապետացն հրէից, թէ՝ *«Ո՞յր որդի է Քրիստոս: Եւ նոքա ասեն՝ Դաւթի: Եւ նա ասաց. «Դաւիթ զՆա Տէր կոչեաց, զիա՞րդ Որդի նորա է»* (Մատթ. ԻԲ 42-43): Ոչ ուրանալով զայն, թէ յազգէն Դաւթի է մարմնով, այլ զի հրեայքն զաներեւոյթ աստուածութիւնն ընդ երեւելի մարմնոյն ոչ իմանային, եւ թէ Տէր է Դաւթի, անգիտանային: Զայն զեկոյց, որ եւ Պետրոս ասէր. *«Ոչ եթէ Դաւիթ ել յերկինս, զի ինքն իսկ Դաւիթ ասաց. «Ասաց Տէր ցՏէր իմ. «Նի՛ստ ընդ աջմէ իմմէ»* (Գործք Բ 34):

Արդ, զպական լնու Տէրն փարիսեցւոցն եւ ոչ թէ զյայտնիսն մերժէ՝ վարդապետելով, թէ նոյն եւ Որդի նորա է ըստ մարմնոյ, եւ Տէր նորա է ըստ արարչութեանն: Արդ, եթէ Դաւիթ մեծ թագաւորն բարեպաշտ եւ մարդասիրութեան շնորհի արժանաւոր Տէր ինքեան կոչէ, ապա ոչ սոսկ մարդ է ըստ խելագարութեան հրէիցն, այլ Աստուած Դաւթի: Անուանք զոյգ՝ Տէր եւ Տեառն ասաց, թէ նիստ մեծ է եւ այս: Ոչ թէ միայն քան զմարդկային բնութիւնս, այլ եւ բնաւ իսկ քան զարարածս: Որպէս Հայր յաւիտենական ունի, եւ Որդի զթագաւորութիւնն. *«Աթոռ Քո, Աստուած, յաւիտեանս յաւիտենից»* (Սաղմ. ԽԴ 7):

Քանզի ոչ թէ յետ խաչին եւ չարչարանացն արժանաւորեցաւ այսպիսի պատուոյ, այլ էառ իբրեւ զմարդ, զոր ունէր իբրեւ զԱստուած: Քանզի ոչ թէ յաղքատութենէ բարձրացաւ, այլ բարձրն, եւ որ ըստ պատկերին Աստուծոյ էր, խոնարհեցոյց զինքն՝ զկերպարանս ծառայի առնլով: Վասն որոյ աւետարանիչն գոչէ. «*Միածին Որդին, որ [է] ի ծոց Հաւր, Նա՛ պատմեաց*» (Յովհ. Ա 18): Եւ Ինքն Տէրն ասէ. «*Ես ի Հայր, եւ Հայր յիս*» (Յովհ. ԺԴ 11): Եւ թէ՝ «*Փառաւորեա՛ զիս, Հայր, առ ի Քէն* |375ա| *փառաւքն, զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի*» (Յովհ. ԺԷ 5): Արդ, իբրեւ զմարդ այժմ լսէ, եւ իբրեւ զԱստուած յաւիտենական ընդունի զթագաւորութիւն:

«*Նի՛սա ընդ աջմէ իմմէ*»: Իսկ զի՞նչ արդեւք աջն ասէ. մի՞թէ ահեկին կողմն անարդ եւ կամ տկա՞ր ասէ, այլ մեր սովորութեամբս վարի Աստուած: Զի մեր աջոյ ձեռն զաւրաւոր է, քան զձախն: Եւ զմեր սիրելիսն յաջմէ մերմէ կացուցանեմք: Եւ զաջ կողմ երկրիս լաւ ասեմք, որ է հարաւ, քան զահեակին, որ է հիւսիսոյ: Որպէս եւ ասէ Սողոմոն[4]. «*Ճանապարհք, որ յաջմէ են, զիտէ Տէր, թիւր են ճանապարհք, որ ձախմէ են*» (Առակ. Դ 27): Եւ հարսն ասէ յերգսն. «*Արի՛ հիւսիս եւ ե՛կ հարաւ*» (Երգ Դ 16): Եւ Տէր ասաց. «*Կացուցէ զաւդիսն ընդ աջմէ, եւ զայծիսն ընդ ձախմէ*» (Մատթ. ԻԵ 33): Եւ աջեացն տայ զարքայութիւն, եւ ձախեացն զհուրն յաւիտենական. այսու օրինակաւ եւ վարի ասա: Բայց ասեն իմաստունքն՝ զՈրդի ընդ աջմէ Հաւր, եւ զՀոգի ընդ աջմէ Որդւոյ: Վասն այնորիկ ասաց Որդւոցն Զեբեթ[ե]այ. «*Նստուցանելն ընդ աջմէ ո՛չ է Իմ տալ, այլ՝ որոց պատրաստեալ է*» (Մատթ. ԺԱ 40):

«*Մինչեւ եղից զթշնամիս քո պատուանդան ոտից Քոց*»: Թշնամիք ի սատանայէ, եւ դեւք ընդ նոսին, որ աստուածային քարոզութեան նորա դիմադարձք եղեն,- հրեայք եւ հեթանոսք: Իսկ «մինչն» ո՛չ է ժամանակի ինչ նշանակումն, այլ սովորութիւն է Աստուածային Գրոց այսպէս վարիլ: Զի «մինչդ» թէպէտ եւ ժամանակական իմն է, այլ այնպիսի է, զի զնշանակեալն յայտնէ, եւ զկնիսն ո՛չ հատանէ: Այսպէս եւ զոր այժմս է, ծանիցես: Զի ոչ թէ մինչեւ ցայն թագաւոր է, եւ յետ այնորիկ ո՛չ, քա՛ւ լիցի: Ուր մանաւանդ առաւել անդ, յայնժամ թագաւոր է կամողաց եւ ոչ կամողաց: Այլ «մինչդ» այնպիսին է, որ ասէ. «*Եւ ագռաւն ի տապանէն եւ անդրէն ոչ դարձաւ, մինչեւ ցամաքել ջրոյն*» (Ծննդ. Ը 7). որ եւ ոչ յետ այնորիկ դարձաւ: Եւ թէ՝ «*Ցաւիտենից մինչեւ յաւիտեանս Դու ես*» (Սաղմ. ՁԹ 2): Եւ անտեղի է ասել, թէ յետ այնորիկ Աստուած ոչ է: Եւ թէ՝ «*Եղիցի յաւուրս Նորա արդարութիւն բազում եւ խաղաղութիւն, մինչեւ կատարեաց ի լուսին*» (Սաղմ. ՀԱ 7), որ եւ ի հանդերձեալն առաւ|375բ|ել տիրէ խաղաղութիւնն յետ կատարման եւ դադարելոյ լուսաւորացդ: Եւ թէ՝ «*Ես եմ, եւ մինչեւ կարի իսկ ծերասջիք, սակայն Ե՛ս եմ*» (Ես. ԽՁ 4), եւ ոչ թէ սպառի էութիւնն Աստուծոյ յետ ծերութեան մարդկան: Եւ թէ՝ «*Ոչ գիտաց զնա, մինչեւ ծնաւ զՈրդին իւր զանդրանիկ*» (Մատթ. Ա 25), եւ ոչ թէ յետ հրաշալի ծննդեանն գիտաց Յովսէփ զՄարիամ, քա՛ւ եւ մի՛ լիցի զայս մտաւ ածել: Եւ թէ՝ «*Ես ընդ ձեզ եմ, մինչ ի կատարած աշխարհի*» (Մատթ. ԻԸ 20), որ եւ մանաւանդ լինելոց է ընդ առաքեալսն յետ կատարած աշխարհի: Որպէս եւ ասաց, թէ՝ «*Բնակեցայց ի նոսա եւ գնացից ի նոսա, եղիւք նոցա Աստուած, եւ նոքա ե[զիցին Իմ ժողովուրդք]*» (Բ Կորնթ. Զ 16): Եւ զի ասէ սոյն աշխարհէս, թէ՝ «*Երկինք եւ երկիր անցցեն, եւ Դու մնաս*» (հմմտ. Մատթ. ԻԴ 35), եւ

4 Բնագրում՝ Սաղոմոն։

«Դու նոյն իսկ ես, եւ ամք Քո ոչ անցանեն» (Սաղմ. ՃԱ 28): Յայս ասցես եւ զառաքելոյ ասացեալսն, թէ՝ *«Պարտ է Նմա թագաւորել, մինչեւ դիցէ զթշնամիս ի ներքոյ ոտից Իւրոց»* (Ա Կորնթ. ԺԵ 25): Եւ Դանիէլ մարգարէ ասէ յետ դաղանացն ի միջոյ բարձմանն, զնա ասէ թագաւորել յաւիտեան (հմմտ. Դան. Բ 44): Եւ Հրշտակապետն Կուսին ասէր. *«Թագաւորութեան Նորա վախճան մի՛ լիցի»* (Ղուկ. Ա 33): Եւ որպէս սուրբքն թագաւորակցեցին Նմա, յորժամ Նա ելանէ ի թագաւորութենէն, այլ զի գրոց սովորութիւն է վարել մինչեւ՝ զ:

«Գաւազան զաւրութեան առաքեսցէ Քեզ Տէր ի Սիոնէ» (ՃԹ 2): Գաւազանն է, որ պատուոյ նշանակ է՝ որպէս թագաւորաց եւ վարդապետաց, առաջնորդաց եկեղեցւոյ եւ է, որ տկարաց վասն յենլոյ: Իսկ Տեառն մերոյ գաւազան իմանալ է զխաչն, որ կանգնեցաւ ի Գողգոթա՝ ի վերայ գերեզմանին Ադամայ փոխանակ մահարեր ծառոյն, զոր կերեալ Ադամայ մեռաւ, սա կանգնեցաւ կենաց ծառ եւ երեր պտուղ զԲրիստոս: Զի որ ուտէ ի Նմանէ, զմահ մի՛ տեսցէ ի յաւիտեանն: Եւ եղեւ Նմա գաւազան զաւրութեան եւ հաստատութեան եւ հովութեանցն, նովաւ Տէր զհաւատ Իւր, զոր ապրեցոյց արեամբն Իւրով: Որպէս եւ ասէր Եսայի. *«Եւ բխեսցէ գաւազանն յարմատոյն Յեսսեայ, եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի, եւ հանգիցէ ի վերայ Նորա Հոգի Աստուծոյ»* (Ես. ԺԱ 1-2): Իսկ ասելն «ի Սիոնէ», զի «դիտանոց» թարգմանի «Սիոնն»: Եւ խաչն ի դագաթան տեղւոջ կանգնեցաւ, բայց նշանակաւ զբնութիւնս ասէ Սիոն: Որպէս եւ սոյն իսկ Դաւիթ ասէ. *«Մայր* |376ա| *Սիոն ասի մարդ, եւ մարդ ծնաւ ի նմա»* (Սաղմ. ՁՁ 5):

«Եւ տիրեսցես Դու ի մէջ թշնամեաց Քոց»: Այն է զարմանք տիրելն ի մէջ թշնամեաց: Ասաց, թէ «ի վերայ թշնամեաց, այլ ի մէջ», զի ի վերայ թշնամեաց տիրելն գոռոզաց եւ բռնաւորաց է: Իսկ «ի մէջ թշնամեաց» Քրիստոսի է եւ Իւր աշակերտացն, որ յամէնեցուն հալածեալ եւ նեղեալ եւ պաշարեալ վշտաւք եւ խոնարհութեամբ, զաւրացան եւ յաղթողք եղեն եւ զբազումս դարձուցին: Եւ որպէս գերեալք ածէին եւ մատուցանէին ի սպասաւորութիւն Տեառն: Որպէս եւ Պաւղոս ասէր. *«Գերեմք զամենայն միտս ի հնազանդութիւնն Քրիստոսի»* (Բ Կորնթ. Ժ 5): Իսկ «թշնամիքն»՝ սատանա իւրայովքն եւ հրեայքն:

«Ընդ Քեզ է Ինձ սկիզբն աւուրն զաւրութեանց» (ՃԹ 3): Ասա զՈրդի Հաւր հաւասար եցոյց եւ ոչ կրսեր, որպէս պիղծն Արիոս ասաց: Քանզի անժամանակ ասաց զՆա: Իսկ «աւր զաւրութեան» զլինելութիւն արարածոցս ասէ: Որպէս յայլում սաղմոսի ասաց. *«Զվայելչութիւն զգեցաւ, եւ զաւրութիւն ածաւ ընդ մէջ»* (Սաղմ. ՂԲ 1): Եւ կամ զաւր կատարածին, յորժամ դայ փառաւք Հաւր, եւ ամենայն Հրշտակք ընդ Նմա: Եւ զսուրբս Իւր փառաւորէ եւ պսակէ, զի փայլեն իբրեւ զարեգակ յարքայութեանն երկնից, որպէս եւ ասաց Տէրն (տե՛ս Մատթ. ԺԳ 43):

«Յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զՔեզ»: Ասա զաստուածային Նորա վայելչութիւնն յայտնեաց: Եւ որ ասաց Նմա Տէր իբրեւ մարդոյ. *«Նի՛ստ ընդ աջմէ Իմմէ, մինչեւ եդից զթշնամիս պատուանդան»* (ՃԹ 1): Զէութիւնն խոստովանի, եւ զմիութիւնն քարոզէ զբնութեանցն: Իսկ «յառաջ քան զարուսեակն» որ ասէ, յայտնէ յառաջ քան զժամանակս եւ զյաւիտեանս զնա ծնեալ: Եւ մինչեւ լուսաւորքս ստեղծեալ էին՝ ար եւ եւ լուսին, կամ արուսեակն, եւ կամ այլ աստեղք: Իսկ յորովայնէն զմիութիւն աստուածութեանն վարդապետէ, թէ ո՛չ յայլմէ, այլ յիմմէ ծնար՝ ի բնութենէս: Որով եւ որովայն յայտ է, թէ առակաբանութեամբ իմանի: Որպէս եւ յորովայնէ ծնանին մարդիկ, եւ ծնեալքն

զնոյն բնութիւն ունին զծնողացն, այսպէս յինէն ծնայ, ասէ, եւ զծնողիս ի քեզ բերես միութիւն: Իսկ ասելն, թէ՝ «ծնայ զՔեզ», յետ անճառ ծննդ|376բ|եանն, որ ի Հաւրէ, եւ զերկրորդս է իմանալ:

«Ի վայելչութիւն սրբոց Քոց»: Թէ յաւիտենից կարդեալ լինէր ի յերանս արդարոցն:

«Երդուաւ Տէր եւ ո՛չ եւս զղջացաւ, թէ Դու ես քահանայ ըստ կարգին Մելքիսեդեկի» (ՃԹ 4): Տէրն յԱւետարանին հրաժարեցոյց, թէ ամենեւին մի՛ երդնուլ՝ մի՛ յերկինս եւ մի՛ յայլ ինչ (Մատթ. Ե 34-36): Եւ ի բազում տեղիս դատանեմք, թէ «երդուաւ Աստուած» գրեալ է: Որպէս այն, որ ասէ, թէ՝ *«Ցանձն Իմ երդնում, ասէ, Տէր Աբրահամու»* (Երբ. Զ 13), եւ թէ՝ *«Երդնու Տէր ի սրբութիւն Իւր»* (Ամոս Դ 2): Եւ թէ՝ *«Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ո՛չ ստեաց»* (Սաղմ. ՃԼԱ 11): Եւ ասա, թէ՝ *«Երդուաւ Տէր եւ ո՛չ եւս զղջացցի»*: Մարդիք արդեալն ի յերդնլոյ, զի բազում անգամ սղալեն եւ ստեն, իսկ Աստուած երդնու եւ ոչ սուտ: Եւ որպէս աստուածոյքն ամենայն հաստատ են եւ անշարժ, այսպէս եւ երդումն Նորա: Իսկ որ երդուաւ նոյն ինքս է, թէ՝ *«Դու ես քահանայ յաւիտեանն»*, զոր ստուգապէս Աստուածայինն Գիրք զքահանայութիւնս զայս անեղը ասաց (հմմտ. Երբ. Ը 24): Զի Ղ. եւտացւոց եւ Ահարոնի քահանայութիւնն ոչ երդմամբ զաւետարանութիւնն ընկալաւ, իսկ Քրիստոսին ահա երդմամբ հաստատի, վասն որոյ եւ ոչ զղջացաւն յաւել: Վասն զի բազում անգամ տնտեսեալ ամէնեցունցն Աստուծոյ ընդ փոփոխմամբ անկանել թողացոյց սմա: Այսպէս եւ զհրէից քահանայութիւնն արար եւ ցածոյց: Սոյնպէս եւ զթագաւորութիւնն նոցունց յաջողեաց եւ քակեաց՝ եւ զասորեստանուոյն, եւ զբաբելոնականին, եւ զմակեդոնացւոցն, եւ զշինելն թողացոյց, եւ զքակելն, եւ զեղծանելն հրամայեաց: Զայս միայն զթագաւորութիւնս խորհեցեալ զոլ յաւիտեանն: Երդուաւ, ասէ, որպէս թէ մի՛ զղջացցի: Մարդկաւրէն ասաց եւ զայս, քանզի ի յախտանալոյ աւտար է աստուածութիւնն, վասն զի եւ զղջանալն ախտանալն է: Իսկ Մելքիսեդեկ ո՛չ հրէից, այլ հեթանոսաց քահանայ էր, քանզի քանանացի էր: Գիրք անհայր, անմայր զսա ասէ՝ նմանեալ Որդւոյն Աստուծոյ (Երբ. Է 3): Որպէս Նա անմայր յառաջնումն, եւ անհայր յերկրորդումն: Վասն զի Մելքիսեդեկ իւրովի ընտրեաց զԱստուած յառաջ քան զկուռս, եւ աղաւթիւք իւրովք յանդունդս ընկղմեաց զտաճար կռոցն՝ ծնաւղաւք իւրովք եւ աղգատոհմիւք: Եւ ո՛չ մ|377ա|նաց ի նոցանէ եւ ոչ մի յազգէն, յորժամ զոհէին զեղբայր նորա զՄելքի կռոցն: Եւ նա կացեալ յանտառին ճարակելով խոտ զամս եւթն, մինչեւ երեւեցաւ Աստուած Աբրահամու եւ ասէ. «Ե՛լթ յանտառն, եւ ճայնեա՛ երկոս անգամ, ա՛յրդ Աստուծոյ: Եւ ելցէ առ քեզ այր մի վայրագ, ազեցո նմա հանդերձ, եւ նա օրհնեսցէ զքեզ, զոր արարն»[5]: Եւ նա փոխեաց հրամանաւն Աստուծոյ զանունն Աբրահամու Աբրամ: Եւ յորժամ զայր Աբրամ ի կոտորածէն Գողոզոմորեանցն, ել ընդառաջ Աբրամու եւ աւրհնեաց զնա, եւ ետ նմա հաց բաղարճ եւ բաժակ՝ յաւրինակ հոգեւոր պատարագիս: Եւ օրինակ է սա Քրիստոսի անուամբն, զի Մելքիսեդեկն «թագաւոր արդարութեան» թարգմանի, եւ թագաւոր արդարութեան Քրիստոս է: Այս անունս է, որ հայր եւ մայր չունի, որպէս եւ ոչ Իսրայեղ, զի Աստուած փոխեաց զերկոցունցն անունն: Զի Մելքիսեդեկի առաջին անունն Սէմ էր, էր եւ Իսրայեղին՝ Յակոբ: Եւ նա հայր ունէր զՄելքի թագաւորն, եւ մայր՝ զՍաղիմ, եւ Յակոբ՝ հայր զԻսահակ, եւ մայր՝ զՌեբեկա: Այսպէս եւ Քրիստոս ո՛չ յաղագս հրէիցն միայն, այլ եւ վասն

5 Աթանաս, էջ 486-487:

ամենայն մարդկան զինքն մատոյց պատարագ Աստուծոյ: Եւ սկսանի զքահանայութիւնն Քրիստոսի ի գիշերին, յորում չարչարանացն համբերէր, յորժամ առեալ զհացն, գոհացեալ երեկ եւ ասէ. «*Առէ՛ք, կերա՛յք ի դմանէ*»: Ըստ նմին եւ զբաժակն առեալ՝ ետ աշակերտացն Իւրոց՝ ասելով. «Առէ՛ք, արբէ՛ք ի դմանէ ամենիքեանն, ա՛յդ է արիւն Իմ Նորոյ Կտակիս, որ յաղագս բազմաց հեղեալ է ի թողութիւն մեղաց» (Մատթ. ԻԶ 26-28):

Գտանեմք այսուհետեւ զՄելքիսեդեկ քահանայ եւ թագաւոր, վասն զի գաղափար էր նա ճշմարիտ Քահանային եւ Թագաւորին եւ յառաջ բերող Աստուծոյ: Ոչ անբան սպանդս, այլ հաց եւ գինի,զոր եւ Աբրահամ եհան ընդ առաջ զսովորական քահանայութեանն սկիզբն: Աւրինակէ զելս ի հայրապետին երանացն՝ հոգւով յառաջ տեսեալ:

Արդ, որովհետեւ ի Դաւթայ Քրիստոս ըստ մարմնոյ, եւ Դաւիթ՝ ի Յուդայէ: Իսկ ըստ կարգին Մելքիսեդեկի քահանայութիւն ընկալաւ Քրիստոս՝ |377բ| լռեալ ուրեմն Ղ. եւտացւոց քահանայութիւնն, եւ Յուդայի ցեղն մեծագոյն քահանայութեանն ուրհնութիւն փոխեցաւ: Քահանայապետ է այժմս, որ ի Յուդայէ ըստ մարմնոյն շառաւեղեցաւ՝ ո՛չ Ինքն ինչ մատուցանելով, այլ մատուցանողացն զլուսն անուանելով, քանզի մարմին Ինքեան Եկեղեցի կոչէ: Եւ յաղագս սորա քահանայապաշտ է իբրեւ զմարդ եւ ընդունի իբրեւ զԱստուած: Մատուցանէ այսուհետեւ Եկեղեցի զմարմնոյ Նորա եւ զարեան աւրինակն՝ զբնաւ զանգուածն Իւրով սկզբնող սէրութեամբ աւրհնել: Իսկ ասելն, թէ՝ «*Տէր ընդ աջմէ քումմէ*» (ՃԹ 5), նման է այս ժէ. սաղմոսին, որ ասէ. «*Յառաջագոյն տեսանէի զՏէրն առաջի իմ միշտ եւ ընդ աջմէ իմմէ, զի մի՛ սասանեցայց*» (Սաղմ. ԺԵ 8, Գործք Բ 25): Զոր եւ անդ մարդկապէս ասաց զայս՝ յայտնեալ զբնութեանցն միութիւն եւ զանքակութիւն: Եւ ասա ըստ նմին զաստուածայինն ասէ եւ զմարդկայինն: Զի ասելն. «*Նի՛ստ ընդ աջմէ իմմէ*» (ՃԹ 1)՝ մարդկային բնութեանս ի ճահ: Իսկ «*յորովայնէ յառաջ քան զարուսեակ ծնայ զՔեզ*» (ՃԹ 3)՝ այս աստուածութեանն յատկութիւն, եթե՝ «*Դու ես քահանայ յաւիտեան*»:

Դարձեալ՝ իբրեւ առ մարդ ասի, ըստ նմին՝ «*Եւ Տէր ընդ աջմէ քումմէ*» (ՃԹ 5), այսինքն թէ՝ անբաժանելի ունի զաստուածային էութեանն միութիւն:

«*Խորտակեսցէ յաւուր բարկութեան զթագաւորս եւ [զ]հեթանոսս*» (ՃԹ 5): Ոմանք զայս ի վերայ Աբրահամու առնուն ի կոտորելոյ զԳոդողոմորեանսն, բայց «աւր բարկութեան» զաւր դատաստանին ասէ, յորում եւ դատի զամենայն բռնաւորս եւ զդիւրապաշտսն: Եւ բազում առնէ զհարուածս ի նեռն եւ ի հաւանեալսն նորա:

«*Եւ խորտակեսցէ զգլուխս բազմաց յերկրէ*» (ՃԹ 6): Այսինքն՝ զիշխանութիւնսն, որ խափանէ եւ դադարեցուցանէ եւ զանիրաւ կենցաղավարեալսն անշէջ հրոյն մատնէ զնոցա լուցկիս:

«*Զուխս ի ճանապարհի արբուսցէ*» (ՃԹ 7): «Ուխ» սովոր են զանձր եւածին ջուրս կոչել, որ ժողովեալ ի բազում վայրաց, յորդութեամբ ընթանայ: Յայս առակէ զողորմութեան Իւրոյ շնորհս, զոր եհեղ եւ հեղուլ հանդերձեալ է, վասն զի մասնաւորս խափանի, եւ կատարեալն հաստ|378ա|ատի: Որպէս եւ ասէ յայլում սաղմոսի. «Արբեսցեն նոքա ի պարարտութենէ տան Քոյ, եւ զուխս վայելութեան Քո տացես ըմբել նոցա» (Սաղմ. ԼԵ 9): Զի որ զբաժակ չարչարանացն Նորա արբին, եւ վաստաց Նորա նոքա հաղորդին (հմմտ. Հռոմ. Ը 17): Իսկ «ճանապարհ» զկենցաղս կոչէ: Վկայէ այսմ մատաց հետակայ բանքս՝ ասելով. «*Վասն այնորիկ բարձրացուսցէ զգլուխս*» (անդ): Զի որ խոնարհեցոյց զանձն մինչ

ի մահ խաչին, յաղագս որոյ եւ Աստուած բարձրացոյց զնա: Մարդկաւրէն ձեւացուցանէ զբանս: Զի Աստուած ո՛չ ի նուաստութենէ բարձրացաւ, այլեւ բարձրեալ գոյր: Խոնարհեցոյց զինքն որպէս զԱստուած, զի զոր ոչ ունէր, էառ Բարձրեալն, եւ սրբոց Իւրոց, զոր ոչ ունէին, եառ նոցա՝ զանդամսն ընդ գլխոյն միաւորեալ եւ թագաւորե[ա]լ: Յորս եւ մեք ժամանեսցուք յանճառ բարիսն եւ ի խոստացեալ պարգեւսն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք եւ զաւրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն: